

Արագ փոխանցումների համակարգերով ստացվող գումարների հեռակա վճարման պայմաններ

15.11.2017թ.

1. Ընդհանուր պայմաններ

- 1.1. «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Բանկ) իր «Տրանսֆեր» դեբետ քարտի (այսուհետ՝ Քարտ) քարտապանների կողմից արագ փոխանցումների համակարգերով ստացվող գումարները (այսուհետ՝ Փոխանցում) կարող է հաշվեգրել վերջիններիս Քարտի հաշվին վերջիններիս կողմից ներկայացված համապատասխան հայտի (այսուհետ՝ Հայտ) հիման վրա:
- 1.2. Հայտն ընդունվում է.
 - 1.2.1. 010 511 292 հեռախոսահամարին հեռախոսազանգի միջոցով,
 - 1.2.2. ՀԾ-հետերնետ Բանկ համակարգով հայտ ուղարկելու միջոցով,
 - 1.2.3. transfer@conversebank.am էլեկտրոնային փոստով,
 - 1.2.4. conversebank-transfer Skype օգտատերին ուղարկված տեքստային հաղորդագրության միջոցով,
 - 1.2.5. +374 94 511 292 Viber կամ WhatsApp օգտատերին ուղարկված տեքստային հաղորդագրության միջոցով:
- 1.3. Հայտը պետք է պարունակի.
 - 1.3.1. հաճախորդի ազգանունը, անունը, հայրանունը՝ ինչպես նշված է անձը հաստատող փաստաթղթում,
 - 1.3.2. անձնագրի սերիան և համարը կամ նույնականացման քարտի համարը,
 - 1.3.3. հաճախորդի բանկային գաղտնաբառը,
 - 1.3.4. արագ փոխանցման համակարգի անվանումը,
 - 1.3.5. փոխանցումը ստանալու գաղտնաբառը,
 - 1.3.6. փոխանցված գումարի չափը և արժույթը,
 - 1.3.7. հաճախորդին պատկանող այն Քարտի 16 նիշը (առանց բացատների), որին հաճախորդը ցանկանում է մուտքագրել փոխանցումը:

2. Հայտի մշակման ժամկետներ

- 2.1. Հայտի դիտարկման օրերն են երկուշաբթիից ուրբաթ՝ բացառությամբ տոն օրերի (աշխատանքային օրերի տեղափոխման դեպքում հնարավոր է նաև շաբաթվա այլ օր), ժամերը՝ 9:00 – 18:00, իսկ տոն օրերի նախօրեին՝ 9:00 – 17:00:
- 2.2. 16:00-ից ուշ ստացված հայտերը կդիտարկվեն հաջորդ դիտարկման օրվա ընթացքում (տե՛ս կետ 2.1):

3. Արտարժույթի փոխանակում

- 3.1. Հայտում նշված Քարտի հաշվի և ստացվող փոխանցման արժույթների տարբերության դեպքում հաշվեգրման պահին իրականացվում է արժույթի փոխանակում՝ հիմք ընդունելով հաշվեգրման պահին Բանկում գործող տարադրամի փոխարժեքները:
- 3.2. Արտարժույթը ՀՀ դրամի փոխանակելու դեպքում գործում են հետևյալ փոխարժեքները.
 - 3.2.1. ԱՄՆ դոլար կամ Եվրո փոխարկելու դեպքում՝ գործող կանխիկ առքի փոխարժեք + 1 ՀՀ դրամ
 - 3.2.2. ՌԴ ռուբլի փոխարկելու դեպքում՝ գործող անկանխիկ առքի փոխարժեք
- 3.3. Ակցիաների շրջանակներում Բանկը կարող է սահմանել արտարժույթի փոխանակման այլ փոխարժեքներ:

4. Հայտի մերժման դեպքեր

- 4.1. Պահանջվող տվյալներից ցանկացածի բացակայության դեպքում Հայտը մերժվում է:
- 4.2. Հայտում լրացված տվյալների սխալ լինելու դեպքում Հայտը մերժվում է:

5. Սահմանափակումներ

- 5.1. MoneyGram համակարգով փոխանցումները չեն հաշվեգրվում Հայտերի հիման վրա և Բանկի կողմից տրամադրվում են միայն Բանկի Գլխավոր գրասենյակում և մասնաճյուղերում:
- 5.2. Skype, Viber և WhatsApp համակարգերով հայտերն ընդունվում են բացառապես տեքստային հաղորդագրությունների ձևով:

6. Անվտանգության դրույթներ

- 6.1. Բանկը կարող է հավաքագրել Քարտապանի կողմից ստացված/տրամադրված տեղեկությունները: Բանկն ապահովում է հավաքագրված տվյալների պահպանությունն ու գաղտնիությունը:
- 6.2. Բանկը պատասխանատվություն չի կրում տվյալների ստացման ժամանակ Քարտապանի կողմից անվտանգության կանոնների չպահպանման, այն է՝ իր հեռախոսահամարը կամ էլեկտրոնային սարքը այլ անձի փոխանցելու կամ այլ ձևով հասանելի դարձնելու կամ հեռահաղորդակցության համակարգերում տեղի ունեցած խափանումների հետևանքով Քարտապանին պատճառված վնասների համար: Բանկը պատասխանատվություն չի կրում հաղորդագրություններ ստանալիս Բանկի հեռախոսահամարի՝ Քարտապանի կողմից միակողմանի արգելափակման հետևանքով հաղորդագրությունների չստացման կամ Հայտին ընթացք չտալու համար:
- 6.3. Հայտը լրացնելով Քարտապանը համաձայնվում է Արագ փոխանցումների համակարգերով ստացվող գումարների հեռակա վճարման պայմաններին: